**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության**
**անշարժ գույքի շուկան 2009թ. IV եռամսյակում**

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված, անշարժ գույքի շուկայի մոնիտորինգի /համակարգված դիտարկումներ/ աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակը: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության* արդյունքում:

2009թ. IV եռամսյակում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել է 2271 իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2009թ. III եռամսյակի համեմատ աճել է 4,8%-ով, իսկ 2008թ. IV եռամսյակի համեմատ՝ 34,0%-ով:

Ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, իրականացված գրանցումների ծավալները ունենն հետևյալ բաշխվածությունը.



2008,2009թթ. IV եռամսյակներում և 2009թ. III եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *IV եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *695* | *36,0%* | *945* | *-0,1%* | *946* |
| Ասկերան | *218* | *82,1%* | *397* | *69,7%* | *234* |
| Մարտունի | *266* | *2,6%* | *273* | *-12,2%* | *311* |
| Մարտակերտ | *162* | *30,9%* | *212* | *-20,0%* | *265* |
| Հադրութ | *45* | *2,5 անգամ* | *111* | *-0,9%* | *112* |
| Շուշի | *210* | *-11,0%* | *187* | *64,0%* | *114* |
| Քաշաթաղ | *99* | *47,5%* | *146* | *-21,1%* | *185* |
| ***Հանրապետություն*** | ***1695*** | ***34,0%*** | ***2271*** | ***4,8%*** | ***2167*** |

Նույն ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների գրանցումները, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2008,2009թթ. IV եռամսյակներում և 2009թ. III եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունները՝ ըստ գործարքների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *Գործարքների տեսակները* | *IV եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ* |
|---|---|---|---|---|---|
| *Առուվաճառք* | *283* | *28,6%* | *364* | *2,0%* | *357* |
| *Նվիրատվություն* | *79* | *34,2%* | *106* | *-7,0%* | *114* |
| *Վարձակալում* | *312* | *1,3%* | *316* | *-21,4%* | *402* |
| *Գրավադրում* | *274* | *86,5%* | *511* | *28,4%* | *398* |
| *Ժառանգություն* | *106* | *18,9%* | *126* | *-3,1%* | *130* |
| *Օգտագործում* | *14* | *71,4%* | *24* | *60,0%* | *15* |
| *Սեփականաշնորհում* | *131* | *-39,7%* | *79* | *-33,1%* | *118* |
| *Մասնավորեցում* | *35* | *-42,9%* | *20* | *2,2 անգամ* | *9* |
| *Առաջնային գրանցում* | *461* | *57,3%* | *725* | *16,2%* | *624* |
| ***Ընդամենը գործարք*** | ***1695*** | ***34,0%*** | ***2271*** | ***4,8%*** | ***2167*** |

2009թ. IV եռամսյակում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել է 364 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 2,0%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 28,6%-ով, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել է 65, իսկ բնակելի տների նկատմամբ՝ 54 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում:

2008,2009թթ. IV եռամսյակներում և 2009թ. III եռամսյակում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխությունները, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *IV եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *105* | *40,0%* | *147* | *-12,0%* | *167* |
| Ասկերան | *38* | *2,4 անգամ* | *91* | *40,0%* | *65* |
| Մարտունի | *42* | *2,4%* | *43* | *-30,6%* | *62* |
| Մարտակերտ | *32* | *9,4%* | *35* | *75,0%* | *20* |
| Հադրութ | *7* | *2,4 անգամ* | *17* | *-5,6%* | *18* |
| Շուշի | *51* | *-56,9%* | *22* | *37,5%* | *16* |
| Քաշաթաղ | *8* | *12,5%* | *9* | *0,0%* | *9* |
| ***Հանրապետություն*** | ***283*** | ***28,6%*** | ***364*** | ***2,0%*** | ***357*** |

2008,2009թթ. IV եռամսյակներում և 2009թ. III եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխությունները՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| N | Անշարժ գույքի տեսակները | Առուվաճառքի գործարքների քանակները | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | IV եռամսյակ 2008թ. | փոփոխումը | IV եռամսյակ 2009թ. | փոփոխումը | III եռամսյակ 2009թ. |
| 1 | *բազմաբնակարան շենքի բնակարան* | *59* | *10,2%* | *65* | *-50,4%* | *131* |
| 2 | *առանձնատուն* | *58* | *-6,9%* | *54* | *20,0%* | *45* |
| 3 | *արտադրական նշ. օբյեկտ* | *8* | *-25,0%* | *6* | *-40,0%* | *10* |
| 4 | *հասարակական նշ. օբյեկտ* | *22* | *-63,6%* | *8* | *-42,9%* | *14* |
| 5 | *ավտոտնակ* | *7* | *2,0 անգամ* | *14* | *2,8 անգամ* | *5* |
| 6 | *հողամաս* | *129* | *68,2%* | *217* | *42,8%* | *152* |
| | *Ընդամենը անշարժ գույք* | ***283*** | ***28,6%*** | ***364*** | ***2,0%*** | ***357*** |

2009թ. III և IV եռամսյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների և կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխումները :

## Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների

| Քաղաքներ | 2009թ. III եռամսյակ | | | 2009թ. IV եռամսյակ | | | փոփոխումը 2009թ. III եռամսյակի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 քմ արժեքը /$/ | | | 1 քմ արժեքը /$/ | | | |
| | նվազագույն | առավելագույն | միջին | նվազագույն | առավելագույն | միջին | |
| Ստեփանակերտ | 470,0 | 640,0 | **555,0** | 510,0 | 750,0 | **630,0** | ***13,5%*** |
| Ասկերան | 100,0 | 130,0 | **115,0** | 115,0 | 140,0 | **127,5** | ***10,9%*** |
| Մարտունի | 90,0 | 130,0 | **110,0** | 100,0 | 140,0 | **120,0** | ***9,1%*** |
| Մարտակերտ | 40,0 | 70,0 | **55,0** | 44,0 | 75,0 | **59,5** | ***8,2%*** |
| Հադրութ | 50,0 | 80,0 | **65,0** | 52,0 | 87,0 | **69,5** | ***6,9%*** |
| Շուշի | 85,0 | 195,0 | **140,0** | 90,0 | 230,0 | **160,0** | ***14,3%*** |

*Բնակելի տներ*

| *Քաղաքներ* | *2009թ. III եռամսյակ* | | | *2009թ. IV եռամսյակ* | | | *փոփոխումը 2009թ. III եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 55000,0 | 83000,0 | **69000,0** | 61000,0 | 97000,0 | **79000,0** | ***14,5%*** |
| Ասկերան | 9500,0 | 11300,0 | **10400,0** | 10000,0 | 13500,0 | **11750,0** | ***13,0%*** |
| Մարտունի | 8300,0 | 10100,0 | **9200,0** | 9000,0 | 11500,0 | **10250,0** | ***11,4%*** |
| Մարտակերտ | 4100,0 | 7200,0 | **5650,0** | 4500,0 | 8000,0 | **6250,0** | ***10,6%*** |
| Հադրութ | 4200,0 | 7300,0 | **5750,0** | 4500,0 | 7800,0 | **6150,0** | ***7,0%*** |
| Շուշի | 6500,0 | 12200,0 | **9350,0** | 7000,0 | 14500,0 | **10750,0** | ***15,0%*** |

2009թ-ի IV եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 316 վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 21,4%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1,3%-ով:

Վարձակալության գործարքների քանակների փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2008,2009թթ. IV եռամսյակներում և 2009թ. III եռամսյակում, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *IV եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *46* | *30,4%* | *60* | *62,2%* | *37* |
| Ասկերան | *65* | *-24,6%* | *49* | *2,2 անգամ* | *22* |
| Մարտունի | *85* | *-49,4%* | *43* | *-30,6%* | *62* |
| Մարտակերտ | *34* | *38,2%* | *47* | *-54,8%* | *104* |
| Հադրութ | *3* | *6,0 անգամ* | *18* | *-30,8%* | *26* |
| Շուշի | *11* | *-72,7%* | *3* | *-72,7%* | *11* |
| Քաշաթաղ | *68* | *41,2%* | *96* | *-31,4%* | *140* |
| ***Հանրապետություն*** | ***312*** | ***1,3%*** | ***316*** | ***-21,4%*** | ***402*** |

2009թ-ի IV եռամսյակում հանրապետությունում գրանցվել է, 1753,49 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության 319 գործարք, որոնց քանակները և մակերեսները` ըստ հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *2009թ-ի IV եռամսյակում վարձակալված հողամասերի* | |
|---|---|---|
| | *քանակը* | *մակերեսը /հա/* |
| *Ասկերան* | *43* | *332,88* |
| *Մարտունի* | *24* | *82,3* |
| *Մարտակերտ* | *146* | *388,5* |
| *Հադրութ* | *17* | *95,86* |
| *Շուշի* | *1* | *0,8* |
| *Շահումյան* | *0* | *0,0* |
| *Քաշաթաղ* | *88* | *853,16* |
| ***Հանրապետություն*** | ***319*** | ***1753,49*** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ հանրապետության քաղաքներում վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս Ստեփանակերտում` հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում` գյուղատնտեսական նշանակության հողամասերը:

2009թ-ի IV եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 511 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 28,4%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ` 86,5%-ով:

2008, 2009թ. IV եռամսյակներում և 2009թ. III եռամսյակում հանրապետության շրջաններում անշարժ գույքի գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխություններն` ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *Անշարժ գույքի տեսակները* | *Գրավադրված անշարժ գույքի քանակ* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *IV եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2009թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2009թ.* |
| *1* | *բ/բ շենքի բնակարան* | *107* | *39,3%* | *149* | *11,2%* | *134* |
| *2* | *առանձնատուն* | *85* | *2,5 անգամ* | *212* | *28,5%* | *165* |
| *3* | *արտադրական նշ. օբ.* | *16* | *87,5%* | *30* | *15,4%* | *26* |
| *4* | *հասարակական նշ. օբ.* | *36* | *2,7 անգամ* | *99* | *76,8%* | *56* |
| *5* | *ավտոտնակ* | *3* | *-33,3%* | *2* | *-60,0%* | *5* |
| *6* | հողամաս | *27* | *-29,6%* | *19* | *58,3%* | *12* |
| | *Ընդամենը* | ***274*** | ***86,5%*** | ***511*** | ***28,4%*** | ***398*** |

2008,2009թթ. IV եռամսյակում և 2009թ. III եռամսյակում գրավադրման գործարքների քանակների փոփոխությունններն՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | IV եռամսյակ 2008թ. | փոփոխումը | IV եռամսյակ 2009թ. | փոփոխումը | III եռամսյակ 2009թ. |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *153* | *71,9%* | *263* | *33,5%* | *197* |
| Ասկերան | *29* | *158,6%* | *75* | *47,1%* | *51* |
| Մարտունի | *41* | *2,0 անգամն* | *82* | *30,2%* | *63* |
| Մարտակերտ | *9* | *5,0 անգամ* | *45* | *4,7%* | *43* |
| Հադրութ | *6* | *3,0 անգամ* | *18* | *-30,8%* | *26* |
| Շուշի | *29* | *-13,8%* | *25* | *47,1%* | *17* |
| Քաշաթաղ | *7* | *-57,1%* | *3* | *3,0 անգամ* | *1* |
| ***Հանրապետություն*** | ***274*** | ***86,5%*** | ***511*** | ***28,4%*** | ***398*** |

2009թ-ի IV եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 99 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 22,0%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 40,4%-ով:

Սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխությունններն՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2008,2009թթ. IV եռամսյակներում և 2009թ. III եռամսյակում, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | IV եռամսյակ 2008թ. | փոփոխումը | IV եռամսյակ 2009թ. | փոփոխումը | III եռամսյակ 2009թ. |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *79* | *1,3%* | *80* | *-14,9%* | *94* |
| Ասկերան | *9* | *-88,9%* | *1* | *0,0%* | *1* |
| Մարտունի | *11* | *-54,5%* | *5* | *4,0 անգամ* | *1* |
| Մարտակերտ | *11* | *-54,5%* | *5* | *2,5 անգամ* | *2* |
| Հադրութ | *4* | *-75,0%* | *1* | *-83,3%* | *6* |
| Շուշի | *51* | *-86,3%* | *7* | *16,7%* | *6* |
| Քաշաթաղ | *1* | *1-ով պակաս* | *0* | *17-ով պակաս* | *17* |
| ***Հանրապետությու*** | ***166*** | ***-40,4%*** | ***99*** | ***-22,0%*** | ***127*** |


ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Գնահատման և համակարգված դիտարկումների բաժին»
ՀԵՌ : 5-17- 49